618 Մեծ գիտության ակն ու աղբյուր,

1. Մեծ գիտության ակն ու աղբյուր,
Ինձ կյանք տվող կենդանի ջուր:
Ծարավ սրտիս լի ավազան,
Փրկության դուռ, կյանքիս տապան,
Խոսքդ հզոր՝ կյանքիս պատճառ,
Քոնն է կյանքս, Քոնն է հոգիս:

2. Ամենօրյա նյութն ես խոսքիս,
Երգ երգոցն ես, սուրբ սերը սրտիս:
Ուրախ կառնեմ քայլերս բոլոր,
Հաղթություն կա ինձ ամեն օր,
Անունը մեծ Քրիստոսի
Անշարժ վեմն է բոլոր սրբոց:

3. Կյանքի խոսքեր ունես, իմ Տեր,
Քո սուրբ սիրուց ո՞ւր գնամ ես:
Կյանք եմ գտել Աստծո սիրով,
Քայլում եմ ես միշտ հավատքով,
Որոշված եմ կյանքի համար,
Քեզ եմ պաշտում ես անդադար: